

միայն ազատեց մարդիկը սատանայի զե
րութենէն և արժանացոյց իւր որդեգրու-
թեան և երկնից Արքայութեան ժա-
ռանգորդութեան:

Ապաքէն մարդիկ առհասարակ կրկարո-
տին և հետամուտ են մտաց զիւրիմանայի
և ձեռօք շօշափելի առարկաներով կազմել
իւրեանց համոզմունքը, ուստի Աստուծոյ՝
առաւել իմանալի գործելոյ և տպաւորե-
լոյ համար իւր Աստուածութիւնը, երկիւ-
ղը, սէրը և այլ ջերմեանդ և բարեպաշ-
տական զգացմունքները մարդկան սրտից
մէջ, և որպէս զի միշտ մեծակշիռ և զիւրի-
մաց ճշմարտութեամբք և իր կամ առար-
կաներով յարաժամ գրգռեն և շարժեն
մարդկան հոգիքը, յարատե սնուցանեն
նոցա սրտից մէջ և ի հոգիս՝ յարգանաց,
զարմացման, ջերմեանդութեան, Աս-
տուածպաշտութեան և Վրիստոնէական
հաւատոյ զգացմունքները, Ակեղ. խոր-
հրդովք կամ խորհրդական միջոցներով
Աստուածային շնորհները վայելելոյ կամ
ընդունելոյ պէտքը անշուշտ ամենակա-
րեօր և անհրաժեշտ է: Արպիսեօք մար-
դիկ զօրաւորագոյն շարժառիթներ և թե-
լադրիչներ կունենան բարեգործութեանց
և առաքինութեանց հետեւելոյ, և մի-
անդամայն անձկարոյ անմահերանութեան
ժամանակոյ համար:

Արեւմն Վրիստոնէական կրօնի մէջ՝
ինչպէս յայանի կերեւի՝ իբրև ի վերուստ
շնորհեալ ճշմարտութեան պարունակու-
թիւնք մեծագոյն մասամբ խորհրդական
են, այս ինքն զգայական աչաց անիմանա-
լի, և միայն հաւատոյ աչաց տեսանելի և
մտաց իմանալի վարդապետութիւնք, ո-
րովք կնորոզի բարոյապէս սիրա իւրաքան-

չևը մարդոյ, կկազդուրի և կզարդանաց
զերբնական շնորհօք և կը փառաւորի
սրբութեան և կատարելութեան ծայրը
հասնելով, և յետ մահուան կվերափոխի
յերանաւէտ հանգիստ և ի վայելս անմահ
կենաց Արքայութեան երկնից:

Արդ Ակեղեցւոյ խորհուրդք՝ զլեւաւորա-
պէս Եօլն ևն *), որոց մէջ գրեթէ այլ
ամենայն մնացեալքն կը բովանդակուին:
Ահաւասիկ են:

- Մկրտութիւնն,
- Գրոշմն,
- Հաղորդութիւնն,
- Կարգն,
- Ապաշխարութիւնն,
- Պսակն, և

Օծումն կամ Այցելութիւն հիւան-
դաց, որոց համար՝ առաջիկայ Յունվարի
ամսաթերթէն սկսեալ՝ կմնայ հետզհետէ
զրիւ և բացատրել:

(Շարունակել):

Վահրամ Վարդապետ
Մանկունի.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԹԷ ՈՒՐ ԵՆ ԱԵԱՐԱՅԻ ԵՒ ՏԳՄՈՒՏ.

Յայտնի է, որ մեր նախնի պատմիչներն ինչ
զաւառում իւրեանք բնակուած ու պատմութիւն
են գրած, էն զաւառի աշխարհազրական գրու-
թիւնները աւելի ճիշտ են ստորագրած. ընդ հա-

(*) Վան ոմանք՝ որք աւել և պակաս կտքին
ցուցանել առանց օրինաւոր փաստի և հակառակ
աւանդութեանց և Վարդապետութեան Ընդհ.
Քրիստ. Եկեղեցւոյ:

կառակն հետի գաւառները սխալ շատ անգամ, Ունիւք սպացուցութիւններ, որ վերջին գարիբի աշխարհագիրներն ու պատմաբաններն ևս օտար երկիրներում գրած լինելով խուցերի և գրասենեակների մէջին, նոյնպէս սխալուած են: Օրինակի համար, որ մեր էս յօդուածին կվերաբերի, բազմախատ Հ. Ինճիճեանն տպեալ Աւնետիկ 1822 ամի Ստորագրութիւն էին Հարաստանեայց, երես 493, Հայաստանի Հին մայրաքաղաք Արտաշատն, որ Մեծամօր և Երասխ գետերի խառնուելոյ տեղն էր, շփոթելով Արտաշատ բերդի կամ գիւղաքաղաքի և երբեմն քաղաքի հետ, որոնք Գուին քաղաքի մօտն են, երկար թարթափելով մեր և այլազգի մատենագրութիւնների մէջն, ի վերջոյ տարակուտուած ասում է «Առ ո՛չ ինչ գրեմք զվերիպակս և զտատանեալ կարծիս. . . օտար ազգաց, որոց դժուարին է կատարեալ ի վերայ հասանիլ տեղեկութեան հեռուոր աշխարհաց. բայց զի՞նչ ասացուք զմերոց ոմանց մատենագրաց, որոց տարածայնեալ ի նախնեաց, զԳուին կարծեն լինիլ Արտաշատ:», Եւտտով կտեսնենք, որ ինքն աւելի է տարածայնովք քան զթէ մեր ինչ ինչ մատենագիրն:

Սրա նման էլ ներկայ 1872 ամի 7 Փետրվայի № 7, Թիֆլիզու Մշակ օրագրումը կարդացի մին յօդուած «Երկրորդ նամակը Պարոն Բաֆիի ուղղւորութիւնից Պարսկաստան», վերնագրով, որի մէջը նկարագրումէ նա Խօյ քաղաքումը ինչպէս ականատես Ղօթուր 1) գետի ափի մին մատուռի տխուր կերպարանքն, և աւելացնումէ իւր անգրագէտ ուղղեցոյցի ասելովն, իրր թէ էս մատուռի մօտը լինի պատահած սրբոց Աւարդանանց պատերազմը, և համոզվումէ, երբ Գուղլաղի ստորուումը թաւալած քարաժայռի վերայ տեսնումէ ծակեր, և ուղղեցոյցի հաստատելովն, որպէս թէ

սուրբ Աւարդանն է իւր նետերովը ծակոտիկ էն գունք: Եւրունակումէ յետոյ մին աղբիւրի նկարագրութիւնն, որի մէջին Մահմետական կնանիքը լողանում են եղած, և սրանցից մինի ասելովն, իրր Աւազանֆարն (Աւազան Փարն) այն ինչ փախլիւանը այս տեղ է իւրեանց պապերին սպանել և թէ ամեն Ուրբաթ երեկոյ Մահմետականները ճրագ են վառում աղբիւրի վերայ ընկած քարի վերայ: Ի վերջոյ եզրակացնումէ թէ «ես նայեցայ, խիստ հաւանական է մտածել թէ Աւարդանանց պատերազմը՝ կամ՝ սրբոցն Աւարդանանց նահատակութիւնն եղել է վերջիշեալ մատուռի մօտակայքումը, այս ինքն Ղօթուր (Պօթուր) գետի ափերու մօտ, որ կարծվումէ պատմական Տըղմուտը:», Եւ թէ «թէպէտ Հայերից շատերի կարծիքը այդ է, պատերազմի Մագուայ (Մակուայ) դաշտումը լինիլը, բայց այդ կարծիքը տարակուսական է, . . . բայց առաւել հաւանական է թէ պխաւոր . . . պատերազմը եղել է Գուղլաղի (աղահանքի) հարաւային կողմումը, այն նուիրական աղբիւրների 2) և այն ըստ աւանդութեան, նետերով ծակոտեկեալ քարաժայռի մօտակայքումը 3), ուր վիզը ինչ Ղօթուր գետը իւր պղտոր լղային և ցեխոտ . . . յատակով ձևացնումէ մին հեղեղատ, որին այլ անուն անյարմար է տալն քան Տղմուտ եյն. և ինչ:»

Զարմանք է թէ ինչպէս Պարոն Բաֆին առանց թերթեղու ազգային պատմութիւնները, մին անգրագէտ ուղղեցոյցի և Մահմետական պատականից խօսքովն . . . և գետի անուան սխալված տառադարձութիւնովը, իւր մտացածին կարծիքովը, աշխատումէ յանկարծ հերքել կամ պարզն ասած, ստել ականատես և ժամանակակից պատմաբանների գրածները, որոնք յայտնի ասում են, թէ Պարսից գունդն նախ Հեր և Զարեանդ էր բանակուած, և էս տեղաց չուեց գնաց Արտազ գաւառը, և բանակվեցաւ Աւարայրի դաշտումը կամ գետի մօտը, Տղմուտ դաշտի կամ

(1) Ղօթուրն, գրվումէ Պարսկական կաթ տառով, և պետք էր գրէր Կօթուր, որ կնշանակէ Բորտալ Մեր նախնիքները էս գետը Հոյրէն կտար են անուանում, Հ. Ինճիճեանն Աշխարհագրութեան Հայաստան հատորի մէջը կտուր, երես 250: Քաւերեալ երեւելի Գաղղիացի ճանապարհորդն և գեոգրանն, որ չրբց էս կողմերն 1805 և 1808 թուին, Կօթուրայ է անուանում, տպեալ ի Փարեզ 1821 ամին, Հուտոր Ա. երես 142:

(2) Մին աղբիւրակ է մի միայն:
 (3) Պարսիկները ասում են, թէ Արաբացի Մահմետէ Հանըֆիի նետով է ծակոտած:

գետի ամուսնը, ուր և հասաւ Հայերի գունդն և եղաւ Վարդանանց պատերազմն 4)։ Աւրեմն անշուշտ հարկաւոր էր Պարոն Բաֆիին որոնել Աւարայրը և Տղմուտը Արտազ գաւառի մէջը, Արտաշատ գիւղաքաղաքէն մին օրվան բացակայութիւնով, և ոչ թէ Հեր գաւառի հարաւակողմումը, որ Արտաշատէն չորս օրվան ճանապարհ հետէ։ Արպէս զի Պարոն Բաֆիին յօգուածը չլինի հետի տեղերում բնակուած հեղինակներին նոր մտքութեան պառճառ, վասն որչ ինչպէս ականատես էն տեղանքը մտադիր եմ, համեմատելով մեր նախնիքների մատենագրութիւնների հետ աղագուցանել, թէ նա սխալուած է։

Եթէ իմ հին Պայազիտէն ու Թավրիզէն ստեպ Խոյ քաղաքը գնալն, էստեղ երկար ժամանակ մնալն, Մակու ճանապարհօրդին, քառասուն և հինգ օր Արտազ գաւառումը շրջելը, էստեղաց վերագառնալը Խոյի կամ Մառականի ճանապարհօրդը կրկին էս վերջին ճանապարհօրդ Մակու գնալն ու էստեղաց Երևան ուղղւորիլը չէին ինձ երաշխաւոր եղած, գարձեալ ես չէի ներել ինձ ձեռնամուխ լինիլ մի հարցի, որի յիշատակն ամեն Հոյ սրտի համար նուիրական է։ Աւելի ևս ինձ երաշխաւոր կլինէր Արտազ նահանգի գետերի, վտակների, դաշտերի, ակերակների, վանքերի և գիւղերի ստորադրութիւններն, որոնք գրած էի 45 օր էստեղանք մնալուս ու շրջելուս, բայց տարաբախտութիւնով 1865 ամի Թիֆլիզ պատահած անկարգութիւնների ժամանակն անհետ եղան, ուստի և այժմ պարտաւորված եմ փարատել Պարոն Բաֆիին անհիմն տարակուսանքն իմ յուշ բերելուս միայն, որք և անկարելին էր մնալ մտքումս կեբան երկար միջոց անցնելէն յետոյ։

Արպէս զի ընթերցողներին աւելի շուտով կարողանամ հասկացնել, յարմար եմ համարում սկսել ուղեորութիւնն Խորվիրապէն դէպ ի Հեր և Զարեանդ գաւառն, որոց մէջին պէտք է որոնած Աւարայրը և Տղմուտը։

Արտաշատ գիւղաքաղաքն կամ քաղաքն է Խոր—վիրապն, որ Գուին քաղաքին դէմ յանդիման է դէպ ի արեւմուտք։ Թօմաս Արծրունին (տպեալ ի Ս. Պօլիս 1852) երես 337, ասում է, «Եւ արքայն Գագիկ, վաղվաղակի հասաներ ի գունն Գունոյ յեզր գետոյն Երասխայ, հանդէպ Վիրապին սրբոյ, յորմէ եղեալ մեծն սուրբն Գրիգորիոս, լուսաւորեալ զՀայաստան աշխարհ», Ղազար Փարպեցին ասում է երես 250. «Զարմիհրահարուխտ սաստիկ և բազում այրընտիր զօրօք դիմեալ, անցանէր ընդ կամուրջ գետոյն Երասխայ, և ի գիւղաքաղաքին որ կոչի Արտաշատ, բնակեր այն օր», Երես 251. «Եւ ճեպով ի վաղիւն դիմին ի վերայ զօրավարին Վահանայ Մամիկոնէի . . . և հասեալք մօտ ի քաղաքն Գվին, յօրինէր Հաղարաուխտ զճակատն ըստ օրինի գործոց պատերազմի», նոյն, երես 299, Վահան Մամիկոնէի Հեր և Զարեանդ գաւառէն վերագառնալոյ համար, «Եւ հասեալք յեզր գետոյն (Երասխա) սաստկապէս ըստ ժամանակի իւրոյ պզտորութեանն և զկամուրջն Արտաշատու գտին աւերեալ, և էր ինչ որ ի տեղեացն բնակչաց, և էր ինչ որ ի սաստկութենէ ջուրցն դիմեցանց . . . իսկ քաջ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան տեսանաղբեալ զլինքն նշանաւ Խաչին . . . իջանէր ի գետն, . . . և ապա մտեալ յոստանն Գուին», Թ. Արծրունին երես 259. «Մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու, որ Բլուրն նորին ասի, յորում շահաստանն Գուին», Էստունք կարգալէն յետոյ ոչինչ տարակուսանք չէ մնում, թէ Արտաշատ քաղաքն կամ գիւղաքաղաքն էր Գվին քաղաքի մօտ, այս ինքն Խորվիրապը, ուր և կայ այժմ էսնուիրական տեղը, ուստի չուեց գնաց սուրբ Վարդանանց բանակն (Պատմ. Չամչ. հատ. Բ. երես 67). ուրեմն սկսելը Հայերի գունդի ուղղւորութիւնն, որ միայն էս ճանապարհօրդն կարող էր չուելն, այս ինքն, Խոր—Վիրապի մօտիցը որ Երասխն անցկենալիս, պէտք է խառնվի գետի աջ կողմուրդէն ճանապարհին, որ գալիս է Մասիսի տակէն ու գնում է Արտազ, էն տեղաց Հերու Այս ճանապարհն փակուած է իւր աջակողմէն բարձր լեռների ստորոտ-

(4) Ղազար Փարպեցի, տպեալ Վենետիկ, 1793 թիւն. երես 118—124, եղիւ է. 2.

ներովն, և ձախակողմէն, Երասխէն՝ Երբեմն նեղ, երբեմն լայն ճանապարհով հինգ փարսակ դէպ ի հարաւ գնալէն յետոյ, դուրս ես գալիս Մակուի ընդարձակ դաշտն, որի արեւելեան կողմումն է այժմ Ռուսաստանի պատկանեալ Շարուր պատմական դաշտն, և սրանց բաժանում է Երասխն, Մակուի գետը իւրեան անուամբ դաշտի մէջէն անց է կենում թափվում Երասխի մէջը, և Մակուն էլ շատ հեռի է վասն որոյ և հիմի անուանում են սրան Մակուի դաշտ, որ հիւսիսէն պատած է Մասիսի ստորասների մեծամեծ լեռներովը. արեւմտէն Սանատրուկ, նախնիքներէն անուանած լեռնովը, իսկ հարաւէն մի մասն ըլլուներով, իսկ միւսն է տափարակ դաշտ, խառն Կարոյ-Չեղին գեղի դաշտի հետ: Երասխի ափէն մերձ չորս ժամ գէպի արեւմուտք գնալէն յետոյ, հասնում ես Մակուի ձորի բերանի կարմունջն, էս տեղաց էլ մին ժամ ընթանալով հասնում ես Մակուի քաղաքն կամ բերժն: Իսկ Երասխի մտէն, այս ինքն Խոր - Վերապէն եկած նեղ ճանապարհի ելքէն դէպի հարաւ արեւմուտք դաշտի մէջովն մերձ 4 - 5 ժամ գնալէն յետոյ, երբեմն փոքր ըլլուների կողքովն, երբեմն փոքր ձորերի մէջովն անցնելով, հասնում ես Կարայ-Չիաղին գեղը կամ դաշտն, որի արեւմտեան կողմում է Ակ-սու ասուած գետն: Կարայ-Չիաղինի մտիցը երևում է երրորդ մին դաշտ, աւելի երկար ու լին 29¹/₂ պատած լեռներով, որին էսօր կոչում են Չօրսի դաշտ, և հնումն Աւարայրի: Սրա համար յետոյ կիսուներ:

Մակուայ դաշտն անշուշտ է Աւարայրին և Օջ Տղմուզ դաշտը, ըստ որում է 29¹/₂ ու անյարմար է պատերազմի համար: Էս դաշտն պէտք է լինի, ըստ ասութեան Թագէոս առաքելոյ վանքի միաբանների, Գերատոյ դաշտն, ինչպէս և զիրքն ևս հաստատում են, և որի համար Ինճիճեանն Ստորա, Հին Հայաս. երես 222, ասում է. «Գընայր նա (տիկինն Սիւնեաց) ի դաշտէն Գերատոյ որ առ Սանատրուկ քաղաքաւ Արտաղ գաւառի անցանել ընդ գաւառն Նախճաւանու ի Սիւնիս», Էս դաշտի արեւելեան կողմումն այս ինքն Երասխի ձախումն է և Հացունեաց դաշտն, որ է այժմ Ռուսների կարանժին ու մաքսատունը Շահ-թախթ ասացեալն, որ Նախիջևանէն 22-24 վերստ

հեռի է: Հացունեաց Խաչի պատմութեան մէջը յիշվում է (պատ. Չամչ. հատ. Բ. երես 532) «Եւ յոչ կալ Խօսորովու ի դաշտին, սպան զնա Հերակլ, և եկն յաշխարհն Հայոց, և ընակեցաւ ի դաշտին Գերատոյ մերձ ի քաղաքն Սանատրուկ Շաւարշայ», Շաւարշանէն երկու ճանապարհ կայ գնալոյ Նախիջևան, մինն է Մակուայ դաշտիցը անց կենալ գնալ Կարայ-Չիաղինի առաջևովն Մառական, և էս տեղաց խոր ու փոր, քարքարոտ, դժուարանցանելի Շամոյ ձորովն անցնել Երասխն, մասնից Զուղայ և էն տեղաց Նախիջևան: Միւսն է Մակուայ դաշտէն քանի մի ժամ գնալ հասնել Շահ-թախթ և անտի Նախիջևան: Առաջինն է չորս օրվան, երկրորդն մի օր ու կէս վան ճանապարհ, Շարունակներ մեր ուղղելորութիւնն դէպ ի Հեր, այս ինքն Խօյ:

Կարայ-Չիաղինէն, անցանելով Ակ-Չայ գետն, երբ գնում ես դէպի Հեր գաւառն, աջ և աջեակ ընկած են բարձր ու ցածր բլուրներ, լեռներ, անջրբլի հովիտներ, տեսնում ես քանի մի զուղր ճանապարհից հեռի. հինց միոնաչափ հեռանալէն յետոյ բարձրանում ես մին դարի դուս, շուռ ես գալիս ընկնում մի տափարակ զառ ու վայր դաշտի վերայ, աչքիդ երևում է Խօյի այգուէտ, ընդարձակ հովտաձև դաշտն, որի վերայ քսանաչափ գեղեր են ընկած, և էս տեղ մինչև Խօյ, որ միոնէն աւելի կլինի, դարձեալ գետ չկայ: Խօյի բերդի մօտերումը Կոտոր գետը անցանելով, գնում ես երեք քառորդ ժամ արքունական ճանապարհով արքունական այգիի առաջևովն, Կաղան-Փար փահլէյանի, այս ինքն Մահամատ Հանիֆիի ասացեալ ուխտատեղի մօտովն փոքր փոքր բարձրանում մի դարի վերայ, շուռ գալիս ընկնում ըլլուների մէջը, և ապա Չարեանոց գաւառի, այս ինքն Գիլման, Խօսորովայ և Հաֆթվան գեղերի դաշտն: Խօյէն մինչև Գիլման մին օրվան ճանապարհ է այս ինքն 5 - 6 փարսախաչափ:

Բերրի և այգիներով լիբը այժմեան Խօյ քաղաքի դաշտն է մեր պատմիչների Հեր, Խեր կամ Խերսկան գաւառն, որ ունի իւր համանուն Խօյ կամ Խեր քաղաքն: Թօմաս Արծրունին ասում է երես 255. «Եւ եղև ի գնայն Գերինկին ի ձմերոցս Ասպուրական իշխանացն, ճանապարհս ա-

բարեալ ընդ ձորն Ընծայից, որոյ կըքն ընդ դաւանն Հիր քաղաքի իսկ նա . . . անցեալ օթադայեցեալ ի գեօղն Փառոտակ (այժմ ափ Փառ, Վառ, Վօռ) յանդիման քաղաքին ,, նոյնն, երես 296. « Եւ մեծանուն իշխանն (Վաշան) ըստ նախնական սովորութեանն չուարարեալ ընդ ձորն Ընծաճոյ, եկն էջ ի Խերական կոչեցեալ դաշտ, և կամեր անցանկ ի ձմերոցս արբունի ի դաւանն Ճուաշ (այժմ Չախաշ, Ճուաշ լիանն միայն կոչուած է անոյ) յաւանն Մառական (այժմ Մարաբան, Մէրէբանն). երես 55. « Բառնայ Երուանդ առ սահմանօրն Ատրպատականի ի ձորն Ընծաճոյ, իսկ Ընծաճոյ ձոր վասն այն կոչեցին, բազում ունեկոյլ ինչս ,, Արդէս Թօմաս Արծրունին, նոյնպէս միւսները, ուր ուրիք Ընծաճոյ ձոր, Ընծախաձոր, ուր ուրիք Ընծայից, Ընծաճոյ կամ Չոր Ընծաճոյ ևս են անուանուած, որ մի և նոյնն է. Ինչպէս երևեցաւ վերն, Ընծաճոյ ձորն աւարտուած է Խոյ քաղաքի դաշտումն. Էս ձորի մէջին եղի է և կայ մինչև ցայսօր մին զեղ բերդով, որին Կոթու են կոչուած. այժմ Թ. Արծրունին ասուած է սրտ համար, երես 261. « Չամուրն Նկան (ձերևս այժման Եկանն է) ի Թաւնուան գաւառի, և զամուրն Կոտոր ի ձորն Ընծայից ,, երես 303. « Ապուրուան կոչէ զԱշոտ եղբարբն հանդերձ ի բերդն Կոտորոց . . . ի միւս զԻշերի կախալ կապեալ զնոսա, և յղէ զԱշոտ և զԴուրզէն ի բերդն Նկան կոչեցեալ ,, երես 305. « Եւ հասեալ զղլուին բարձեակ տանի յամբոցն Աշինոս, ուր էր Դուրզէն, նմանապէս և ի բերդն Կոտորոց ի ձորն Ընծայոց, յորում էր Աշոտ. ,,

(Մեծեւն ի յաւարտումն Երևանի):

ՌԱՐՈՒ ՕՐԱՍՏԱՍ ՅՈՒ ԼԱԿՍ ԼԱՌԱԳԵՆԱՅ
ՃԱՆԱՊԱՐԶՆՈՐԴՈՐԹՅՈՒՆ
 (Ն-Բ-Ն-Ի-Բ-Ի-Ն)

Գ. Բ. Մ. Բ. Ն.

Մեկերն ի Կերէ. — Կապա. — Եղբարիք. — Գլոցունա. — Եկեղեցի Հայոց. — Վեց զերի ազգուիք եղբարացոց (Երբրեզոց). — Արևելեան ազգաց զազախար զվաճառուց կոնանց. — 17 ամբողջ Թուսոց յափուսս Սեու ծովու. — Կշմակութիւն նոցա. — Ձիազնացութիւն մեր. — Գանձան իշխան Մեղրեցոց, արգիւնք նորա և. կեցեալ. — Ասասոյ. — Երևանի. — Քուրայի. — Գօրի. — Արցոն. — Մցիսթ. — Տփլիս:

Յառաջնուած աւուր ամենան Օգոստոսի 1843 ամի մտեալ ի շոյնուան, որ կայր ի նաւահանգստին Կերէի (12) ի վերայ ծովուն Ազախու, կար յերրորդ ժամուն յԱնապա. զայս ամբոց հիմնեցին Տաճիկք յամին 1784. իրր տեղի տարւաւ առթեան ընդ Եղբարցիս (Չերքեղս). ուստի ընդ վաճառուցն և քաղաքական յարարութիւնք լինեկէն Կովկասու ընդ մէջ Կ. Պօլսոյ և Բախաբոյ. Աստ Տաճիկք վաճառեկէն Եղբարացոց զհանգերձս և զէնս, և յետինքս նոցա զդատերս իւրեանց, զմանկունս, և զզերեմբարեալ Ռուսո, մինչև զօրք Ռուսոց մարտ եկեալ կորցեցին զայս տեղի ի Տաճիկաց (13):

(12) Կերէ, բարեանեի և վաճառուան քաղաք Տարբիկեան նահանգի, շինեալ յեր ծովուն Ազախու, և տարածեալ մինչև ցեղեան, որ յանուն մեծին Մեղրացոց. աստ էր ի հրնումն քաղաք Գանակապէտն, շինեալ ի Յունաց 500 ամբոց յասալ քան զԲերտաս. բնակիչք տար ոչմօ հասանեն ց10,000 հ. ի քաղաքիս յայտնի են եկեղեցիք Ռուսոց երեք, Հայոց եկեղեցի մի փոքրիկ կամ աղօթատուն զոր վեց ամբոց յասալ հաստանցին բարեպաշտն Հայ վաճառականք քաղաքին և ունին ի գաւաթ նորին զպոց փոքրիկ և բնակարան քահանայի. Հոսովեականաց եկեղեցի, մի, և Հրէից Միտագօզս, վարժարանք երկուց սեւեց, Բանկարան հմութեանց, արարան, Բասրան, ընթերցարան հասարակաց, զարժարանք (Քարբիկ), հիւանդանոց, զեղարան, հիւրանոց, ևն. շնորհ մեծ ունիմ հիւրանարանեան Հայազգեաց տեղոց, որք ստակեցին զտարազիր պանդխտութիւն իմ զաւարտ քան ի վերջ 1866 ամի Կ. Ք.:

(13) Այ տեղորդ ինչ համարիք յայտնել տասանօր, թէ ի Թուրքմանութեանս մերում չանոցաք խնամով և անթերի փօթեի ի մերս բարբառ որ ինչ բանք էին զազէս և քաշ: